810

203·5
Б-98

280
974-ՇՀ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922
Именная, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՁՐՔԱՒԵՐԱԿԱՆ

ԱՌ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՍ

ԵՒ

ՎԵՐԱՏԵՍՈՒՉՍ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՅՈՑ

ՏՓԽԻՍԻ ԵՒ ԹԵՄԻ ՆՈՐԻՆ։

203.5
Շ-98

ԹԻՖԼԻՍ
Կովկասի Կառավարչի Գլխ. Կառավ. տպարանում
1884.

203.5
Շ-98

30380 ա.հ.

20474-60

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԻՄԵՐԷԹԻ

№ 204

'Ի 15 հոկտեմբերի 1884 ամի

'Ի ՏՓԽԻՍ:

Փոխանորդաց մերոց և վերատեսչաց բարեկարգութեան եկեղեցեաց Թեմիս:

Ցաւ է ասել, որչափ ինչ բանք տրտնջանաց և անբաւականութեանց յաճախեալ են առ մեզ 'ի լրագիրս յամենայն նուազս ազգ. հոգևոր ընտրութեանց 'ի Թեմիս, չասասցուք և այլուր, իբր զանկանոնութեանց, տեղի գտելոց ի նոսա: Թողեալ զամացն անցելոց՝ յիշեսցուք զմերձագոյնն ժամանակաւ, զկատարեալն յայսմ ամի 'ի 29 Յունվարի զընտրութիւնն երեսփոխանաց ժողովրդեան իւրաքանչիւր եկեղեցւոյ 'ի գործ որոշման Թեմական պատգամաւորի: Որչափ նիւթ խօսից և լրագրական առարկութեանց եղև այն՝ բացայայտ է ամենեցուն. և Թէպէտև անհնարին է չնկատել 'ի ցաւ սրտից մեր և բազմաց, զի յարձակիլ 'ի տարապարտուց, անարգել անխնայաբար և առ դերևս ելս անձ-

նական հաշուոց և միտմանց զրպարտել անխտիր միջոցօք և բամբասել զիսկն և զիրաւն և զօրինաւորն տակաւ առ տակաւ 'ի վայելչութեան վերածին 'ի կարգ իրաւանց 'ի մերում ողբալի ժամանակի, յորում ըստ Առաքելոյն բանի նախանձ և դառնութիւն և հակառակութիւն սրտից պարծին սուտ առնել զճշմարտութիւնն, բայց և զայն ևս պարտ է խոստովանիլ, թէ արդարև՝ ընտրութիւնք առանց որոշեալ հրահանգի և սահմանեալ եղանակի մասնակցութեան ժողովրդեան, որչափ և զգուշաւոր ջանիւք կատարեսցին, չկարեն զերծ լինել 'ի մասնաւոր թերութեանց և 'ի շփոթութեանց. վասն որոյ առի բառնալ զառիթս անկարգութեանց, ըստ որում և անբաւականութեանց, սահմանեցաք վասն թեմիս զկանոնս զայսոսիկ, զորս և առաջադրեմք յանթերի կատարումն։

Ա.

Ըստ կանոնաց և բաղմադարեան նուիրական սովորութեան Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցւոյ ամենայն ազգային հոգևոր ընտրութիւնք կատարին անխտիր մասնակցութեամբ հայ ժողովրդեան ամենայն դասակարգի. իսկ պահպանութիւն կարգաց օրինաւոր մասնակցութեան գործ է հոգևոր իշխանութեան և պաշտօնէից նորին։

Բ.

Մասնակցութեամբ ժողովրդեան կատարին ընտրութիւնք թեմական պատգամաւորի, անդամոց հոգաբարձութեան հոգևոր դպրոցաց, խնամատարութեան աղքատ ծխոց և ծխական խորհրդոց, եթէ իցեն, երեցփոխանաց և հաշուատեսաց

եկեղեցեաց և առհասարակ ամենայն պաշտօնէից 'ի պէտս հաստատութեանց ընդ տեսչութեամբ հոգևոր իշխանութեան եղելոց։

Գ.

Վասն ամենայն ազգ. հոգևոր ընտրութեանց 'ի քաղաքիս Տփխեաց ամսօրեայ աւուրքք յառաջ, ըստ կարգադրութեան թեմական Առաջնորդի, ծանուցանի յեկեղեցիս Հայոց և 'ի պարբերական թերթս 'ի գիտութիւն ժողովրդեան, իսկ 'ի գաւառական քաղաքս և գիւղորայս թեմիս ըստ կարգադրութեան փոխանորդաց Առաջնորդի և վերատեսչաց բարեկարգութեան եկեղեցեաց։

Դ.

Յետ ծանուցման միաբան քահանայք իւրաքանչիւր եկեղեցւոյ փութան կազմել առանձինն առանձինն զցուցակս ծխոց իւրեանց *) և ներկայացուցանել յառաջնորդանիստ քաղաքիս՝ կարգելոյն յԱռաջնորդէ թեմիս Մասնաժողովոյ. իսկ 'ի գաւառական քաղաքս՝ փոխանորդաց, վերատեսչաց բարեկարգութեան, կամ ցուցելոցն 'ի նոցանէ անձանց, ոլք վաւերացուցեալ զցուցական վերադարձուցանեն առ նոսա յաղագս համեմատութեանն ըստ թ. յօդուածոյ։

Ե.

Եթէ պէտք իցեն, նաև տոմակօք մարթէ հրաւիրել

*) Պատասխանատու վասն ճշտութեան անուանց և թուոց ծխոցըն է ծխատէր քահանայն։

գծխականս յընտրութիւն, միայն ըստ կարգադրութեան հոգևոր իշխանութեան:

Ձ.

'Ի Նշանակեալն աւուր և ժամու ծխականք իւրաքանչիւր եկեղեցւոյ ժողովին յեկեղեցիս իւրեանց 'ի կատարել զընտրութիւն ժողովրդական երեսփոխանաց. Մասնակցութիւն ժամաւորաց միանգամայն արգելեալ լինի:

Է.

Յանդամոց իւրաքանչիւր անբաժան գերդաստանի մին միայն մասնակցէ ընտրութեանն:

Ը.

Ընտրող և ընտրելի չկարեն լինել նախ՝ որք տակաւին շարունակեն զուսմունս իւրեանց. երկրորդ՝ որք ըստ կարգադրութեան հոգ. ծայրագոյն կամ թեմական իշխանութեան մերժեալք են 'ի ծառայութենէ ընդ նոյն տեսչութեամբ, իբրև վնասակարք իրաւանց և շահուց եկեղեցւոյ:

Թ.

'Ի Նշանակեալն աւուր յետ ժամերգութեանն, որք 'ի կոչն եկեալ են ծխականք ներկայանան ծխատէր քահանայից իւրեանց, որք համեմատեալ զանուանս և զազգանուանս նոցա ընդ վաւերացուցեալ ցուցակաց իւրեանց, ընթեռնուն 'ի լուր ամենեցուն. յետ այսորիկ՝ որք չունին զիրաւունս մասնակցու-

թեան յընտրութիւնն, եթէ չկամին մեկնիլ անտի, պարտին առանձնանալ 'ի մի վայր. և մնացեալքն մատչին 'ի գործ ընտրութեանն:

Ժ.

'Ի դէպս որ և է ազգ. հոգևոր ընտրութեանց ժողովրդականք իւրաքանչիւր եկեղեցւոյ Տփխիսի *) ընտրեն զերիս ներկայացուցիչս կամ երեսփոխանս, որք պարտին լինել միայն 'ի ծխականաց եկեղեցւոյ. ծուխ միոյ եկեղեցւոյ չկարէ ընտրել ներկայացուցիչ ծխոց այլ եկեղեցւոյ:

ԺԱ.

Ընտրութիւնդ այդ կատարի 'ի ներկայութեան քահանայից եկեղեցւոյ. ընտրողացն բաժանեն զթերթիկս թղթոյ, իրաւամբ նշանակելոյ իւրաքանչիւրումն զերիս անուանս. յետ որոյ ժողովելով զայնոսիկ, նախ համեմատեն զթերթիկսն ընդ թուոյ ընտրողաց, և ապա ընթեռնուն զնշանակեալ անուանս. առաջին երեք ստացողքն բազմութեան ձայնից համարին ընտրեալ երեսփոխանք ծխոց. և երկուքն յետ նոցա փոխանորդք, որք 'ի պահանջել հարկին լնուն զթիւ բացակայող երեսփոխանաց. և անմիջապէս կազմեալ զընտրողական թերթըն՝ ստորագրեն և միաբան քահանայք և ընտրողք: Մինչև ցաւարտ ստորագրութեան ամենեցուն ոչ ոք ունի իրաւունս

*) Կուսանաց անապատն քաղաքիս չը համարի առանձին ծխական եկեղեցի, և քահանայ նորին է միաբան Մողնւոյ եկեղեցւոյ, յորոյ 'ի մատեանս և նշանակէ զործնակատարութիւնս իւր. վասնորոյ և յաւուրս ընտրութեանց ընդ ծխոց իւրոց ներկայ լինի 'ի նմին եկեղեցւոջ:

մեկնելոյ 'ի տեղւոջէն։ Ընտրութեանս նախագահէ աւագ կամ ժամօրհնող քահանայն։

ԺԲ.

Յաւարտելն զատորագրութիւնն աւագ կամ ժամօրհնող քահանայն ստանայ զընտրողական թերթն և զցուցակս ծխոց իւրաքանչիւր քահանայի (զոր յետս ստացեալ իցէ 'ի Մասնաժողովոյն, առ 'ի նշանակել զեկաւորս 'ի ծխոցն) և ընդ ձեռն վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց քաղաքամասին իւրոյ 'ի նմին իսկ աւուր առաքէ 'ի Մասնաժողովն 'ի ներկայացուցանել թեմ. Առաջնորդին։

ԺԳ.

Ընտրեալ ներկայացուցիչք ժողովրդեան Տփխիսի 'ի նշանակեալն աւուր ժողովին առ Առաջնորդն թեմիս և ընդ նորուն նախագահութեամբ կատարեն, առ որ հրաւիրեալքն են, զընտրութիւնն հոգաբարձուաց Ներսիսեան ազգ. հոգևոր դպրոցի, թեմական պատգամաւորի *) կամ պաշտօնէից այլ հաստատութեանց։ 'Ի ժողովին նոցա բաժանին ամենեցուն թերթիկք թղթոյ. եթէ ընտրութիւն թեմ. պատգամաւորի է՝ 'ի նշանակել իւրաքանչիւրումն զմի անուն. յաւարտ որոյ համեմատեալ զթերթիկսն ընդ թուոց ընտրողաց՝ ընթեռնուն 'ի ձայն զանուանս նշանակեալս, և առաջին չորս ստացողք բազմութեան ձայնի ենթարկին գաղանի քուէարկութեան. յորոց առաջին բազմաձայնն համարի պատգամաւոր և երկրորդն փոխանորդ, (կանդիտատ). իսկ եթէ հոգաբարձուաց է՝ 'ի

*) 'Ի գործ ընտրութեան թեմ. պատգամաւորի ընդ տփխիսեցւոց մասնակցին և երեսփոխանք գաւառաբնակ Հայոց, ըստ ժէ. յօդուածոյ։

նշանակել զերկոտասան անուանս և յետ կատարման համեմատութեան ըստ վերջնոյն՝ վեշտասան ստացողք բազմութեան ձայնից ենթարկին քուէարկութեան. յորոց առաջին երկոտասանքն համարին հոգաբարձուք, և չորքն յետ նոցա—փոխանորդք։ Զընտրութիւնս այլ պաշտօնէից նշանակին անուանք ըստ թուոյ անդամոց այնր հաստատութեան, որ վասն ընտրութիւնն կատարի։ Երեսփոխանք չէ՛ և ոչ ստորագրեալ զթերթն չկարեն մեկնիլ 'ի բաց։

ԺԴ.

Նախ քան զքուէարկութիւնն հարցանի համաձայնութիւն քուէարկելի անձանց։

ԺԵ.

Հոգաբարձու կարեն ընտրիլ թէ քահանայք և թէ աշխարհականք, որք վայելեն զյարգանս և զվստահութիւն ժողովրդեան։

ԺԶ.

Որովհետև գաւառական քաղաքք թեմիս իւրաքանչիւրն զմի կամ ոչ առաւել քան զերկուս և զերիս ունին եկեղեցիս, ուստի վասն նոցա սահմանի յետագայս—Որ մի եկեղեցի է, ժողովրդականք հրաւիրեալք ըստ կարգի դ. յօդուածոյ կատարեն զընտրութիւնն. իսկ ուր երկու կամ առաւել են եկեղեցիք, ծխականք իւրաքանչիւր եկեղեցւոյ ընտրեն զերկոտասան ներկայացուցիչս ընդ նախագահութեամբ փոխանորդի Առաջնորդի կամ վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց կամ աւագ քահանայի, պահպանութեամբ Զ. Է. Ը. Թ. և ԺԱ. յօդուածոց հրահանգիս։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԺԷ.

[illegible] ընտրութեան Թեմ. պատգամաւորի դաւառաբնակ ազգայինք առաքեն զերկուս երկուս ներկայացուցիչս ըստ տեղեաց հոգեւոր կառավարութեանց և վերատեսչաց բարեկարգութեան եկեղեցեաց, համաձայն կարգադրութեան Թեմ. Առաջնորդի:

ԺԸ.

Ընտրութիւն երեցփոխանաց եկեղեցեաց կատարի համաձայն հրահանգին կազմելոյ 'ի ցանձնաժողովոյ Առաջնորդական յանձնարարութեանց, բացառութեամբ մասնակցութեան ժամաւորաց, որ յիշատակեալն է 'ի ծանօթութեան Գ. յօդուածոյ, և որ խափանի այսուհետև ըստ զօրութեան հրահանգին այսորիկ:

ԺԹ.

Ցամենայն ընտրողական ժողովս զգուշաբար յարգի պահպանութիւն կարգի և վայելչութեան:

Ի.

Ընտրութիւնք օրինաւոր համարին միայն պահպանութեամբ վերոյգրեալ կանոնաց:

Ստորագրեաց Թեմակալ Առաջնորդ Հայոց Վրաստանի և Իմերէթի ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ:

ЗОЧ

810

0027586